ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» հունիսի 2026թ. № 379-Ա

«ՅՈՒՆԻԹԻ ԷՎՈԼՈՒՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ -ԻՆ
ՀՎՀՀ 02257094
(ՀԱՍՑԵ՝ Ք. ԵՐԵՎԱՆ Ս. ՏԱՐՈՆՑԻ ՆՐԲ 14-37)
ՀԵՌԱԽՈՍ (+374) 44 50 75 07
ԷԼ.ՀԱՍՑԵՆ info.unity.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1521-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 153-Ն որոշումը, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների պաշտոնական կայքէջերի միասնական կառուցվածքի, բովանդակության և ձևավորման ապահովման անհրաժեշտությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2026 թվականի հուլիսի 1-ից լուծել 2026 թվականի հունվարի 29-ին կնքված N «ՀՀՓԿ-ՄԱԾՁԲ-02/26» ծածկագրով գնման պայմանագիրը, որը կնքվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Յունիթի Էվոլուշն Սիսթեմս» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև՝ www.justexpert.am կայքի ամենամսյա տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով:

Սահմանել, որ պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Կատարողի կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ, այլ պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պաշտոնական կայքէջերի նկատմամբ

սահմանված միասնական պահանջների ներդրմամբ և դրանց համապատասխանեցման անհրաժեշտությամբ:

Հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը սույն որոշման մասին գրավոր ծանուցել պայմանագրի մյուս կողմին՝ օրենքով և պայմանագրով սահմանված կարգով:

Ապահովել պայմանագրի լուծումից բխող փոխադարձ հաշվարկների և այլ իրավական գործողությունների իրականացումը՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պայմանագրի մյուս կողմին պատշաճ ծանուցելու պահից, եթե պայմանագրով այլ ժամկետ նախատեսված չէ:

Հարգանքով՝

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Կարապետյան